ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԽՄԲԱՎԱՐ ԶԱՔԱՐ ՔԷՇԻՇԵԱՆԻ ՀԵՏ

# «ՎԱՐԱՆԴԱ» ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

**6 եւ 7 Սեպտեմբերին Ստեփանակերտի եւ Շուշիի մէջ տեղի ունեցան Շուշիի «Վարանդա» մանկապատանեկան եւ երիտասարդական երգչախումբին տասնամեակի ելոյթները: Ղեկավարութեամբ երգչախումբին հիմնադիր եւ խմբավար Զաքար Քէշիշեանի, շուրջ 120 մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ ունեցան երգչախմբային բարձրորակ կատարում:**

**Ստեփանակերտի սպայի տան մէջ տեղի ունեցած ելոյթին ընթացքին Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան նախագահ Արկադի Ղուկասեան Զ. Քէշիշեանը պարգեւատրեց մշակոյթի եւ կրթութեան ականաւոր գործիչներուն տրուող «Վաչագան Բարեպաշտ» շքանշանով: Այս առիթով խմբավարին հետ ունեցանք հետեւեալ հարցազրոյցը:**



Զաքար Քէշիշեան եւ «Վարանդա» երգչախումբը՝ ելոյթի ընթացքին:

«ԱԶԴԱԿ».- Այս տարի տասնամեակն է Շուշիի «Վարանդա» երգչախումբին: Ի՞նչպէս յիշատակեցաւ այս յոբելեանը:

ԶԱՔԱՐ ՔԷՇԻՇԵԱՆ.- Երբ այս գարնան «Վարանդա»ի հետ առաջին հանդիպումը եղաւ, ինծի ըսին. «Պարո՛ն, այս տարի տասնամեակն է «Վարանդա»ին, ի՞նչ պիտի ընենք»: Իրենց բացատրեցի, որ տարիները, իբրեւ օրերու եւ ամիսներու ամբողջութիւն, իրենց մէջ ինքնին նորութիւն չեն պարունակեր: Նորութիւնը մեր ներդրումը պիտի ըլլայ: Եւ տասնամեակը առանձին նշանակութիւն մը պիտի չունենար մեր ընթացքին համար: Այս իմաստով գոհ եմ ըսելու, որ տասներորդ անգամ ըլլալով պատմութիւնը կրկնեց ինքզինք եւ երգչախումբին երգացանկը նորացաւ, հարստացաւ, փոխուեցաւ եւ մնացած ամէն ինչը նոյնը մնաց:

«Ա.».- Ի՞նչ պատկեր կը կու՛զմէ ներկայիս «Վարանդա»ի անդամներուն թիւը:

Զ. Ք.- Ի հարկէ երգչախումբին միշտ կը միանան նոր անդամներ: «Կարկաչ»ին նման, «Վարանդա»ն եւս ունի իր շատ փոքրերու, միջին տարիքի երեխաներու եւ երէցներու խմբաւորումները, որոնց ամբողջութիւնը կը կազմէ 120 հոգի: Ուրախալի է ինծի տասնամեակին առիթով ողջունել անցնող տասը տարիներու ընթացքին երգչախումբին մէջ այս կամ այն տարիներուն երգած նախկին փոքրիկները, որոնք հիմա արդէն համալսարանականներ են: Մեծ մասը կազմած են իրենց ընտանիքները եւ արդէն երեխաներու տէր են (հաշուեցինք, որ քսանհինգ հատ «թոռնիկ» ունիմ): Արցախի մեր ելոյթներուն անոնք եւս մեզի միացան եւ վերջին մէկ երկու երգերուն գեղեցիկ հաւաք մը եղաւ:

Այս տարուան երգացանկին մէջ կրկնեցինք կարգ մը երգեր, որոնք նախորդ տարիներու երգացանկերէն են, եւ որոնք շատ սիրելի են մեզի: Անոնց կողքին, ի հարկէ աւելցան նորերը, որոնք յատուկ «Վարանդա»ին համար յօրինուած են:

Մեր տասնամեակի համերգին «Վարանդա»ի փոքրիկները անակնկալօրէն նշեցին «Կարկաչ» երգչախումբին հնգամեակը: Անոնք երգեցին «Կարկաչ» երգը եւ ինծմէ խնդրեցին յուշանուէր մը յանձնել «Կարկաչ»ի անդամներուն: Այս մէկը ինծի համար եւս հաճելի անակնկալ էր: Միւս կողմէ, «Կարկաչ»ի փոքրիկները ձայնագրութեան միջոցով իրենց շնորհաւորական խօսքը ուղարկած էին «Վարանդա»ին:

Այս հաւաքէն եւ տոմսերուն ու որմազդներուն վրայ գրուած տասնամեակէն զատ, առանձնաբար տասնամեակի առիթով յատուկ նշումներ չեղան:

«Ա.».- Բացի անշուշտ ձեր պարգեւատրումէն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկադի Ղուկասեանի կողմէ պարգեւատրուեցաք «Վաչագան Բարեպաշտ» շքանշանով: Այս առիթով ի՞նչպէս կ'արտայայտէք ձեր զգացումները:

Զ. Ք.- Անկեղծօրէն անակնկալ էր ինծի համար: Երբ համերգներուն փոխադրամիջոցները ապահովելու գացած էի, ընկերութեան տնօրէնը շնորհաւորեց զիս եւ առջեւս բացաւ «Ազատ Արցախ» թերթը, որուն մէջ կար նախագահ Արկադի Ղուկասեանի հրամանագիրը, որով զիս «Վաչագան Բարեպաշտ» մետալով կը պարգեւատրէր: Անկեղծօրէն նոյնիսկ չէի գիտեր, թէ ով է Վաչագան Բարեպաշտը: Յետոյ պարզուեցաւ, որ ան մեր նշանաւոր թագաւորներէն մէկն է, մշակոյթի եւ կրթութեան մեծ աշխատանքներ կատարած է եւ եղած է Ստեփանակերտ քաղաքի՝ նախկին անուանումով Վարարակնի հիմնադիրը:

Յաջորդ օրը արդէն համերգն էր, որուն ընթացքին տուին շքանշանը: Բայց շատ պարտաւորեցնող երեւոյթ էր: Մինչ այդ այն զգացողութեան մէջ էի, որ Շուշիի կամ արցախահայութեան ես ինծմէ կու տամ բան մը, որուն համար ներքին գոհունակութիւն կ'ապրէի: Իրենք ինծի տուին աւելի մեծ արժէք մը, որ պարտաւորեցնող է ինծի համար: Ես շքանշանը սիրով կիսեցի բոլոր անոնց հետ, որոնք այս անցնող տասնամեակին Արցախի մէջ փամփուշտ արձակող զէնքին զուգահեռ, բռնեցին մշակոյթի զէնքերը եւ յատկապէս անոնց, որոնք այս դժուար կացութիւններուն Արցախը չեն լքեր եւ չեն հեռանար եւ, ի հարկէ, «Վարանդա»ի փոքրիկներուն, որոնք ինծի հետ յանձնառու կ'ըլլան շարունակելու իրենց երաժշտական երթը:

«Ա.».- Իբրեւ «Վարանդա»ի ղեկավար միայն ամրան երեք ամիսը կը գտնուիք երգչախումբին մօտ: Ձմրան ընթացքին երգչախումբը որեւէ ձեւով երաժշտական աշխատանք կը տանի՞:

Զ. Ք.- Ցաւօք սրտի, մինչեւ օրս «Վարանդա»ն ամառնային երգչախումբ մըն էր, զիս փոխարինող խմբավար երաժիշտ չըլլալու պատճառով: Սակայն այս տարի պատկերը բարեփոխուած է, որովհետեւ ունինք ուսանողուհի մը, որ աւարտելէ ետք Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանը, ընդունուեցաւ Երեւանի Պետական երաժշտանոց եւ ձմրան արձակուրդին մէկուկէս ամիսներուն պիտի գայ Շուշի եւ համերգային փոքրիկ ծրագիր մը պիտի պատրաստէ: Կայ նաեւ աւելի մեծ ուրախութիւն մը. «Վարանդա»ի հիմնադիր սերունդի փոքրիկներէն երկու հոգի կ'ուսանին Ստեփանակերտի Երաժշտական ուսումնարանին մէջ, արդէն երրորդ դասարան են եւ իմ բացակայութեանս իրենք եւս փորձեր պիտի կատարեն երգչախումբի փոքրիկներուն հետ: Այս ձեւով թէ՛ երգչախումբը ձմեռնային կեանք պիտի ապրի եւ թէ իրենք պիտի ունենան երաժշտական տարրալուծարան մը, ուրկէ մեծ փորձառութիւններ պիտի քաղեն:

«Ա.».- Ամրան կարճ ամիսներուն ի՞նչպէս կը հասցնէք «Վարանդա»ի ելոյթներուն պատրաստութիւնը:

Զ. Ք.- Ուրախ եմ ըսելու, որ այս տարի, հակառակ միայն հինգ շաբթուան ընթացքին համերգային ծրագիրը պատրաստելու առնչութեամբ իմ մեծ մտավախութեանս, փոքրիկները կրցան իւրացնել երգերը եւ ամէն տարուան նման որակաւոր պատրաստութեամբ ներկայանալ ելոյթներուն: Ի տարբերութիւն լիբանանեան մեր պայմաններուն՝ հոն փորձերը կը կատարենք ամէն օր: Առտուները երկու ժամ փորձ կը կատարենք պատանեկան խումբին հետ, երեկոները՝ մէկ ժամ շատ փոքրերուն հետ, եւ երկու ժամ՝ երիտասարդականին հետ: Երախտապարտ եմ այս փոքրիկներուն, որոնք փաստօրէն իրենց ամառնային արձակուրդը նուիրաբերեցին «Վարանդա» երգչախումբին:

«Ա.».- Ի՞նչպէս կը նկարագրէք «Վարանդա»ի անցնող տասնամեակի ուղին:

Զ. Ք.- Եթէ թիւերու լեզուով խօսելու ըլլանք, պէտք է ըսել, որ Շուշիի մէջ անցնող տասնամեակին ընթացքին աւելի քան 250 փոքրիկներ այս կամ այն տարիներուն երգած են երգչախումբին հետ: Երգչախումբը տուած է 150է աւելի ելոյթներ Ղարաբաղի տարբեր շրջաններուն, Երեւանի եւ Լիբանանի մէջ: Երգած է մօտ 200 դասական եւ յատկապէս ժամանակակից երգեր, որոնց շուրջ 150ը յատկապէս ստեղծագործուած է «Վարանդա»ի համար: Նաեւ իրագործուած է «Կարկաչ» եւ «Վարանդա» երգչախումբերուն միացեալ համերգներու ծրագիրը, մինչ «Վարանդա» 1995ին լիբանանահայ գաղութին հիւրը եղած էր առանձնապէս: Ուրախալի է, որ նախկին փոքրիկները այսօր իբրեւ երիտասարդներ եւ համալսարանականներ կը շարունակեն երգել երիտասարդական 30 հոգինոց երգչախումբին մէջ, որ արդէն ունի արհեստավարժ խումբի հասունութիւն:

«Ա.».- «Վարանդա» ի՞նչ հեռանկարներով պիտի շարունակէ իր ուղին:

Զ. Ք.- «Վարանդա»ն երգչախումբ մըն է, որ ստեղծուած է երկու նպատակով. նախ՝ Շուշիի ազատագրութեան յատկապէս առաջին օրերու դժնի կացութեան մէջ մանուկներուն բարոյահոգեկան կորով տալ եւ երկրորդ՝ ամէն բանէ առաջ Արցախ աշխարհի մէջ տարածել երգ-երաժշտութիւնը: Այդ երկու նպատակներուն ալ երգչախումբը լիարժէքօրէն հասած է արդէն եւ կը շարունակէ իր երաժշտական ուղին:

Ուրախ պիտի ըլլամ, եթէ պատմութիւնը շարունակէ կրկնել ինքզինք: Ի հարկէ, զուգահեռաբար պէտք է երգչախումբը ձայնագրէ իր ամփոփ սկաւառակը, որովհետեւ այն երգերը, որոնք կը հնչեն Ղարաբաղի տարածքին, միայն սեփականութիւնը պէտք չէ ըլլան Ղարաբաղի ժողովուրդին, այլ իբրեւ մանկապատանեկան գեղեցիկ երգերու հաւաքածոյ՝ տարածում գտնեն նաեւ Հայաստանի եւ յատկապէս Սփիւռքի մէջ: Սակայն այս մէկը մեծածախս ծրագիր է. սփիւռքի ձայնագրութիւնն ու ամփոփ սկաւառակին հրապարակումը կը կարօտին նիւթական մեծ միջոցներու:

Նաեւ անհրաժեշտութիւն են երեւանեան ելոյթները, որոնք կը նպաստեն երգչախումբին ստեղծագործական թռիչքներուն: Ասիկա արդէն ոչ թէ Արցախի փոքրիկին համար է, այլեւ՝ Արցախէն դուրս գտնուող հայուն:

Հարցազրոյցը վարեց՝
Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

---

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

# ՊԱՅՔԱՐ՝ ԹՐՔԱԿԱՆ ՉԱՄԻՉԻՆ ԴԷՄ

Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի Քալիֆորնիոյ կեդրոնական գրասենեակի նախագահ Հայկուհի Յովհաննէսեան յայտնած է, որ ներկայիս թրքական չամիչը գրաւած է ամերիկեան շուկան եւ կը սպառնայ անգործութեան մատնել հազարաւոր ամերիկացի հողագործներ: Թրքական չամիչի ամերիկեան շուկայ ներածման հարցը սուր բնոյթ ստացած է, երբ ի յայտ եկած է, որ Ֆրեզնոյի շրջանէն ամերիկահայ խաղողագործներ գործէ արձակուած են: Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի Քալիֆորնիոյ կեդրոնական գրասենեակը անմիջապէս յղած է նամակներ՝ քոնկրէսականներ Ճորճ Ռատանովիչի եւ Քէլ Տուլիի՝ խնդրելով, որ Քոնկրէսը քննէ այս հարցը եւ պարզէ, թէ արդեօք թրքական չամիչը օրինականօրէն մուտք կը գործէ Միացեալ Նահանգներ:

Հայկուհի Յովհաննէսեան ըսած է նաեւ, որ Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի Քալիֆորնիոյ կեդրոնական գրասենեակը կը պայքարի, որ ժողովուրդը գնէ միայն քալիֆորնիական չամիչ: «Լոս Անճելըս Թայմզ» թերթը իր 5 Սեպտեմբերի թիւին մէջ յիշած էր, որ չամիչի համաշխարհային պաշարին 25 առ հարիւրը թրքական է:

## «ԱՐԻՈՒԹԵԱՆ ՄԵՏԱԼ» 137 ԶՈՀՈՒԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՒ

17 Սեպտեմբերին, Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հրամանագիրով յետ մահու «Արիութեան մետալ»ով պարգեւատրուած են Մեղրիի եւ Կապանի շրջաններէն 137 զոհուած ազատամարտիկներ: Պարգեւատրումը տեղի ունեցած է Կապանի մշակոյթի կեդրոնին մէջ: Ներկայ գտնուած են Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար զօր. Միքայէլ Գրիգորեան, ինչպէս նաեւ՝ այլ բարձրաստիճան սպաներ եւ զոհուած ազատամարտիկներու հարազատներ:

Պաշտպանութեան փոխ նախարարը երախտագիտութիւն յայտնած եւ սփոփանքի խօսքեր ուղղած է զոհուած ազատամարտիկներու հարազատներուն:

Նշենք, որ 18 Սեպտեմբերին պարգեւատրուած են նաեւ Գորիսի եւ Սիսիանի շրջաններէն զոհուած ազատամարտիկներ:

---

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ՀԱՅ ԿԻՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Գիտութիւններու Ազգային ակադեմիայի մէջ տեղի ունեցած է կլոր սեղան մը, որ նուիրուած էր Հայաստանի հասարակական եւ քաղաքական կեանքին մէջ հայ կիներու դերակատարութեան բարձրացման հարցին: Կլոր սեղանը կազմակերպած էին՝ Հայաստանի ընկերային ապահովութեան նախարարութիւնը, «Հայ ժողովրդավարական ֆորում» կազմակերպութիւնը եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը: Կլոր սեղանին մասնակցած էին Հայաստանի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Սփիւռքի կարգ մը հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Հայաստանի ընկերային ապահովութեան նախարար Ռազմիկ Մարտիրոսեան իր բացման խօսքին մէջ նշած է, որ ներկայիս Հայաստանի քաղաքական կեանքին մէջ կիներու մասնակցութիւնը կրաւորական է: Հայ կիները հիմնական հարց կը նկատեն բազմածնութեան վերականգնումը, երեխաներու խնամքն ու դաստիարակութիւնը: Այս առումով նախարարը շեշտած է պետութեան դերը՝ ստեղծելու անհրաժեշտ եւ նպաստաւոր պայմաններ կիներու համար:

«Հայ ժողովրդավարական ֆորում» կազմակերպութեան նախագահ Լիւտմիլա Յարութիւնեան յայտնած է, որ ներկայիս կիները կը գործեն ընդհանրապէս համակարգչային եւ լրատուական ասպարէզներուն մէջ: Ան աւելցուցած է, որ անոնք պէտք է ջանք թափեն մուտք գործելու համար այլ ասպարէզներու մէջ եւս:

Հայաստանի հասարակական եւ քաղաքական կեանքին մէջ հայ կնոջ դերակատարութեան բարձրացման մասին իրենց տեսակէտները արտայայտեցին նաեւ կլոր սեղանի միւս մասնակիցները: Արտայայտուեցան տարբեր մօտեցումներ եւ տարբեր կարծիքներ, սակայն քննարկումները մնացին տեսական սահմաններու մէջ, եւ գործնական քայլերու նշում տեղի չունեցաւ:

## ՀԱՅ - ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՇՈՒՐՋ

16 Սեպտեմբերին Հայաստանի Ազգային Ժողովի ընկերային առողջապահութեան եւ բնապահպանութեան հարցերով մնայուն յանձնախումբի նախագահ Գագիկ Թադէոսեան ընդունած է Գերմանիոյ բնապահպանական հարցերով զբաղող յանձնախումբը՝ գլխաւորութեամբ Գերմանիոյ բնապահպանութեան նախարարութեան մէջ խորհրդարանի ներկայացուցիչ Կիլա Ալթմանի:

Գ. Թադէոսեան հիւրերուն ներկայացուցած է Ազգային Ժողովի բնապահպանութեան յանձնախումբին գործունէութիւնը, հանրապետութեան դիմագրաւած բնապահպանութեան հարցերը, մասնաւորապէս՝ Սեւանայ լիճին հարցը: Քննարկուած է նաեւ Մեծամօրի կորիզային կայանի փակման հարցը: Այս հարցին մասին Գագիկ Թադէոսեան յայտնած է, որ կորիզային կայանին փակումը ներկայիս կրնայ յառաջացնել ուժանիւթի ազգային անվտանգութեան հարցեր:

Իսկ ինչ կը վերաբերի Կուր եւ Արաքս գետերու ապականման, Կիլա Ալթման յայտնած է, որ Գերմանիոյ կառավարութիւնը պատրաստ է նիւթական օժանդակութիւն տրամադրելու՝ հարցին լուծման համար: Ան աւելցուցած է, որ այս ծրագիրը շրջանային բնապահպանման հարց է եւ Գերմանիա հետաքրքրուած է Հայաստանի դիրքորոշմամբ: Իր կարգին, Գագիկ Թադէոսեան հաստատած է, որ հայկական կողմը միշտ համաձայն է համագործակցութեան՝ Կովկասի շրջանի բնապահպանման հարցերուն եւ իւրաքանչիւր կառուցողական ծրագիրի շուրջ:

## ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ «111» ՀԱՏԸՆՏԻՐԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ

«111» խորագիրը կը կրէ վերջերս լոյս տեսած հայ բանաստեղծութիւններու ընտրանին, որուն շնորհահանդէսը տեղի ունեցաւ 16 Սեպտեմբերին, Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան մէջ: Ժողովածուն կազմած է Մեսրոպ արք. Աշճեան:

Խօսք առնելով գիրքի շնորհահանդէսին՝ սրբազանը նշեց, որ ժողովածուն հայ գիրերու գիւտին 1600ամեակին նուիրուած գիտական-մշակութային միջոցառումներէն մէկն է եւ կը նպատակադրէ հայ դպրոցականները ծանօթացնել հայ ժողովուրդի մշակութային ժառանգութեան, որպէսզի անոնք տէր կանգնին հայ գրականութեան եւ մշակոյթին:



## ԸՆԿԵՐԱՅԻՆ ՃՈԳԵՐ

*Լիբանանեան կեանքի երեւոյթներ*

**ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԻ ՍԵՄԻՆ՝**

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ՀԱ՞ՐՑ ԹԷ ԼՈՒԾՈՒՄ

*Պաքալորէայի պետական քննութիւնները արդէն աւարտած են եւ յաջողած աշակերտները իրենց վկայականներն ու զանազան համալսարաններու ծանօթացման գրքոյկները առած՝ կը փորձեն իրենց ապագան ճշդող քայլերու դիմել:*

*Կարծես՝ այս հանգրուանը մարդու մը կեանքին ամէնէն դժուար հանգրուաններէն մէկն է, երբ ան ստիպուած է հազարաւոր ընտրանքներէն եւ նիւթերէն մէկը զատել եւ այդ ալ ի գին իր ճակատագիրին: Պաքալորէայի քննութիւններուն տաղտուկը եւ անոնցմէ ետք յաջողելու կամ ձախողելու վախն ու մտահոգութիւնը ապրած աշակերտը, հազիւ երկար շունչ մը առած եւ յաջողութեան յաղթանակէն գինովցած կրկին կը սկսի տագնապիլ՝ որոշելու համար, թէ ի՛նչ կ'ուզէ ըլլալ, տասնեակ համալսարաններէն ո՛ր մէկը կ'ուզէ կամ կրնայ յաճախել եւ ի՛նչ ձեւով կ'ուզէ իր բարձրագոյն ուսումը ստանալ՝ աշխատելո՞վ եւ ուսանելո՞վ, թէ միայն ուսման յատկացնելով իր կեանքը:*

*Դպրոցական օրերուն զանազան համալսարաններէ պատասխանատուներ կ'այցելեն վարժարանները եւ աշակերտներուն ընդհանուր պատկերացումներ կու տան իրենց համալսարանին մէջ ուսուցուող նիւթերուն եւ տրուած դիւրութիւններուն մասին: Տասէ աւելի նման բացատրութիւններ լսելով՝ վստահաբար աշակերտը տեղեկութիւններու իր պաշարը կը հարստացնէ ու անպայման աւելի եւս կը շուարի...:*

*Համալսարան յաճախելը այսօր բնական եւ նոյնիսկ անհրաժեշտ պայման մը դարձած է լաւ ապագայ մը ունենալու համար: Ներկայ դարու ապրած զարգացումներուն հետ փոխուած են ուսած եւ զարգացած ըլլալու չափանիշները: Նախապէս երկրորդական վարժարան աւարտած աշակերտ մը շատ դիւրութեամբ քանի մը գործ կը գտնէր եւ անոնցմէ լաւագոյնը եւ իր նախասիրութեան համապատասխանողը կ'ընտրէր: Այսօր նոյն մակարդակի եւ նոյնիսկ աւելի կրթութիւն ստացած անձը ոչ մէկ տեղ կրնայ աշխատիլ եւ ապագան ապահովել: Համալսարանական բարձրագոյն ուսումը այսօր շատ կարեւոր է եւ այդ պատճառով գրեթէ բոլոր երկրորդական դպրոց աւարտողները կ'ուղղուին դէպի հոն, եթէ նոյնիսկ որոշ շրջան մը աշխատելէ ետք հնարաւորութիւն ունենան բարձրագոյն կրթութիւն ստանալու:*





*Վերամուտի շրջանին այդ հաստատութիւնները, իրենց կարգին, ուսանողներ գրաւելու համար կը սկսին աշխուժ կերպով ծանուցումներ կատարել, իրենց ընձեռած առիթներուն մասին խօսիլ, նշել, թէ տրուելիք վկայականը ընդունուած է քանի մը պետութիւններու կողմէ եւ ներկայացնել իրենց զեղչերը եւ այլ առաւելութիւններ:*

*Լիբանանի մէջ պատրաստըւած ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ այսօր Լիբանանի մէջ կը գործեն պետականօրէն ընդունուած 42 համալսարաններ եւ արհեստից բարձրագոյն հիմնարկներ: Վերջինները յաւելեալ առիթ կու տան պետական քննութիւններուն ձախողած անձերուն, որպէսզի կարենան իրենց արհեստից կրթութիւնը ամբողջացնել:*

*Շատ են նաեւ բարձր մակարդակ ունեցող համալսարանները, որոնք դոյզն թերութիւն իսկ չեն ընդունիր, եւ համալսարան մտնող թեկնածուն պէտք է ամբողջացնէ անոնց դրած խիստ պայմանները, յաջողած ըլլայ տուեալ քննութիւններուն եւ համալսարան մուտքի քննութեան, որպէսզի կարենայ մուտք գործել համալսարան: Այս համալսարանները շատ յստակ ու լաւ ձեւով պահած են իրենց դիմագիծը եւ առիթ չեն տար որեւէ խախտումի եւ մակարդակի անկումի:*

*Սակայն անոնց կրթաթոշակները շատ յաճախ աւելի սուղ են, քան՝ աւելի նուազ մակարդակ ու բծախնդրութիւն ունեցող համալսարանները, եւ տնտեսական դժուարութիւններու պատճառով, ուսանողները, ըստ իրենց նիւթական կարելիութիւններուն, կրկին կը բաժնուին զանազան համալսարաններու միջեւ:*

*Այս երեւոյթը անուղղակի ձեւով մրցակցութիւն մը ստեղծած է համալսարաններուն եւ հիմնարկներուն միջեւ, քանի իւրաքանչիւրը կը փորձէ իր տուած առիթներով եւ պայմաններով «կաշառել» աշակերտը: Այս մէկը պատճառ կ'ըլլայ նաեւ ուսման մակարդակի անկման, որովհետեւ խորքին մէջ անոնք կ'ընդունին յաջող ու ձախող աշակերտները, առանց նկատի առնելու, թէ անոնք պիտի կարենա՞ն շարունակել եւ ապագային հպարտութիւն ներշնչել հաստատութեան:*

*Կան նաեւ տուեալներ, որոնց համաձայն, Լիբանանի մէջ կը գործեն պետական ճանաչում չունեցող կրթական զանազան հաստատութիւններ, որոնք որոշ չափով գաղտնի կը պահեն իրենց գոյութիւնը՝ կառավարութեան եւ կրթական նախարարութեան հետ հարցեր չունենալու համար:*

*Դպրոցական կեանքէ ետք համալսարանական կեանքը եւ անոր եռուզեռը բնականաբար նոր թափ ու շունչ կու տան ուսանողին, որ համալսարանը վայելելու ու անոր ընձեռած առիթներէն օգտուելու կողքին՝ կ'ապրի նաեւ այլ մտահոգութիւններ եւ տագնապներ:*

*Համալսարան, բարձրագոյն կրթութիւն, հսկայական շէնքեր, ընդարձակ բակեր ու պարտէզներ, ընկերային ջերմ մթնոլորտ, զանազան խաղեր եւ նորութիւններ, վերջին զարգացումներուն հետ քայլ պահող սարքաւորումներ... այս բոլորը կը կազմեն համալսարաններուն ուրախ եւ լաւ կողմը, սակայն կայ նաեւ դժուարն ու տխուրը:*

*Եթէ ուսանողը ընտրած է լաւ համալսարան մը եւ կը պատկանի համեստ դասակարգի, ինքնաբերաբար պէտք է աշխատի, եթէ ոչ ուսման, գէթ գիրքերը եւ այլեւայլ ծախսերը հոգալու համար: Այս ձեւով ուսանողը բնականաբար որոշ կաղացում մը պիտի արձանագրէ իր դասերուն մէջ, որովհետեւ անհրաժեշտ ժամանակը պիտի չունենայ պարտականութիւնները կատարելու: Համալսարանի եւ աշխատանքի ժամերուն միջեւ ան պիտի փորձէ իր առաւելագոյնը ընել, որպէսզի յաջողի, որովհետեւ հակառակը ընելու պարագային անոր կեանքէն տարի մը եւս պիտի կորսուի ու տքնաջան աշխատանքը ապարդիւն անցնի: Միւս կողմէ, հարուստ դասակարգի պատկանող համալսարանականներէն ոմանք, հակառակ իրենց ընձեռուած բոլոր դիւրութիւններուն, անհոգութեամբ կը մօտենան դասերուն եւ կը կարծեն, թէ իրենց բուն տեղը հոն է եւ իրենք պէտք չունին համալսարանը աւարտելու եւ «սովորական» գործի մը սկսելու...*

*Պէտք չէ մոռնալ նաեւ ֆոնտերը, որոնց դռները կը թակէ ուսանողը եւ կը սպասէ անոնց արդիւնքներուն, եւ որոնցմէ երբեմն կախեալ կ'ըլլայ իր ճակատագիրը: Ուսանողներու ականջին հազիւ հասած, թէ այս կամ այն հաստատութիւնը համալսարանականներուն օժանդակութիւն կու տայ, անոնք անմիջապէս կը դիմեն, կը խնդրեն եւ երբեմն ժամերով կը սպասեն դիմումնագիր մը ձեռք ձգելու համար: Այս բոլոր յոգնութենէն եւ վազվզուքէն ետք, տակաւին կայ կրթաթոշակը վճարել չկարենալու պարագան, որուն պատճառով ուսանողը ինքնաբերաբար կիսատ կը ձգէ իր ուսումը եւ կ'երթայ իր կեանքի ուղին այլ տեղ փնտռելու:*

*Այս բոլորին մէջ պէտք չէ մոռնալ Լիբանանեան համալսարանը, որ մատչելի գիներով ուսանողներ կ'ընդունի, սակայն հոն եւս կան այլ հարցեր եւ դժուարութիւններ: Իրողութիւնը այն է, որ 1000 դիմողներուն համար անհրաժեշտ տեղեր չեն ըլլար եւ այդ պատճառով, բնականաբար, յարմար միջնորդ չունեցող կամ շատ լաւ նիշեր չապահոված անձը դուրս կը մնայ համալսարանէն, կը զրկուի բարձրագոյն ուսումէն եւ կամ կը փորձէ այլ դուռ բախել:*

*Կրթական տարեշրջանի ընթացքին եւս Լիբանանեան համալսարան յաճախողը կրնայ հանդիպիլ զանազան հարցերու եւ խոչընդոտներու (յաճախակի դասադուլներ, ցոյցեր...) , որոնք կրնան նոյնիսկ ուսանողը մղել ուսումնառութիւնը կիսատ ձգելու:*

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Շար.ը՝ էջ 8



## ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

*Առողջ Մնալու Գաղտնիքները*

# ՁԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ ՈՒՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՉԱՓԱՒՈՐ ՔԱՆԱԿԸ

## (ՊՏՈՒՂՆԵՐԸ)



### ԵԼԱԿԸ

*Մէկ գաւաթ ելակը կը պարունակէ քառասունհինգ ջերմուժ: Ինչպէս կը տեսնենք, ջերմուժին քանակը բարձր չէ: Ելակը հարուստ է Սէ. կենսանիւթով, որ դէմքին փայլք կու տայ եւ ակռաները կը պաշտպանէ:*

### ԽՆՁՈՐԸ

*Իւրաքանչիւր շերտ կը բաղկանայ մօտաւորապէս ութսուն ջերմուժէ: Խնձորը իր մէջ կը պարունակէ մեծ քանակութեամբ բնաթել, մասնաւորաբար՝ ջուրին մէջ լուծուող, ինչ որ կ'օգնէ արեան շաքարի եւ քոլեսթերոլի աստիճանը հաւասարակշռելու: Խնձորը հարուստ է նաեւ Սէ. կենսանիւթով, որ մարմինը կ'աշխուժացնէ եւ կ'օգնէ վէրքերը բուժելու: Բորբոքումներու դէմ եւս բուժիչ դեր կը կատարէ խնձորը: Ան մարմինը կը պաշտպանէ քաղցկեղէ, մասնաւորաբար՝ թոքերու: Ըստ ուսումնասիրութիւններու, անոնք, որոնք մեծ քանակութեամբ խնձոր կը սպառեն՝ շատ աւելի նուազ կ'ենթարկուին սիրտի հիւանդութեան, քան անոնք, որոնք քիչ քանակութեամբ կը սպառեն:*

### ԾԻՐԱՆԸ

*Ծիրանը հարուստ է K+ հանքայինով: Ան կ'օգնէ հաւասարակշռելու արեան ճնշումը եւ հեռու կը պահէ սիրտի հիւանդութիւնները:*

*Ծիրանը հարուստ է Ա. եւ Սէ. կենսանիւթերով: Միջակ չափի ծիրանի երեք հատիկներ հաւասար են վաթսուն ջերմուժի: Չոր ծիրանի հինգ հատիկներ հաւասար են ութսուն ջերմուժի: Չոր ծիրանին մէջ շատ աւելի է Ա. կենսանիւթին քանակը, ինչ որ կը բարելաւէ տեսողութիւնը եւ կ'աւելցնէ մարմնին դիմադրողականութիւնը:*

### ՊԱՆԱՆԸ

*Պանանը հարուստ է Պէ. կենսանիւթով: Ան բորբոքումներէ կը պաշտպանէ մարմինը եւ կ'օգնէ հիմոկլոպինի արտադրման, ինչ որ իր կարգին կը նուազեցնէ արեան տկարացման համեմատութեան աստիճանը: Իւղերէ զերծ է եւ՝ դիւրամարս: Պնդութեան եւ փորհարութեան առաջքը կ'առնէ: Միջակ չափի պանանը մօտաւորապէս հարիւր ջերմուժ կը պարունակէ:*

### ԱՒՈՔԱՏՕ

*Աւոքատոն հարուստ է չյագեցած ճարպով* (nonsaturated fat), *որ կ'օգնէ նուազեցնելու արեան քոլեսթերոլի քանակը: Աւոքատոն իր մէջ կը պարունակէ ֆոլէյթ կենսանիւթ, որ արեան կարմիր գնդիկներուն քանակը կ'աւելցնէ: Հարուստ է նաեւ փոթասիումով, մակնեզիումով, երկաթով, Սէ. եւ Պէ. կենսանիւթերով:*

### ԿԵՌԱՍԸ

*Գաւաթ մը կեռասը կը պարունակէ հարիւր հինգ ջերմուժ: Հարուստ է Սէ. կենսանիւթով եւ բնաթելով: Պէտք է ուշադիր ըլլան, սակայն, անոնք որոնք երիկամներու մէջ քար ունին, որովհետեւ կեռասը իր մէջ կը պարունակէ քիչ քանակութեամբ* oxalate *տարրը, որ պատճառ կը դառնայ այդ քարերուն կազմուելուն:*

### ԱՐՄԱՒԸ

*Հարուստ է փոթասիումով, ինչ որ անհրաժեշտ է մկաններուն եւ ջիղերուն համար: Հարուստ է նաեւ բնաթելով, որ կ'օգնէ մարսողութեան: Արմաւի հինգ հատիկները հաւասար են հարիւր տասնչորս ջերմուժի:*

### ԹՈՒԶԸ

*Հարուստ է քալսիումով, երկաթով, փոթասիումով, ինչպէս նաեւ՝ Պէ. կենսանիւթի ընտանիքէն քանի մը տեսակներով: Անհրաժեշտ է ջիղերուն, դէմքին եւ մկաններուն առողջութեան համար: Թուզի երեք հատիկներ հաւասար են հարիւր տասնմէկ ջերմուժի: Չոր թուզի երեք հատիկներ հաւասար են հարիւր քառասուներեք ջերմուժի: Վերոյիշեալ կենսանիւթերու կողքին, չոր թուզը հարուստ է նաեւ բնաթելով:*

### ԽԱՂՈՂԸ

*Գաւաթ մը խաղողը հաւասար է հարիւր տասնչորս ջերմուժի: Հարուստ է Պէ. եւ Սէ. կենսանիւթերով, որոնք անհրաժեշտ են սիրտին, երակներուն եւ ջիղերուն առողջութեան համար: Խաղողը կը պարունակէ նաեւ* ellagic *ասիտ, որ քաղցկեղ յառաջացնող տարրեր կը փճացնէ:*

### ՔԻՈՒԻ

*Քիուիին հատը հաւասար է վաթսուն ջերմուժի: Թեթեւ է եւ հարուստ Սէ. կենսանիւթով՝ աւելի քան նարինջը: Քիուին կ'աւելցնէ մարմնին դիմադրողականութիւնը եւ կը պաշտպանէ մակնեզիումը, որ անհրաժեշտ է ջիղերուն համար:*

### ՄԱՆԿՕ

*Մանկօն հարուստ է Ա., Պէ., Սէ. եւ Էօ. կենսանիւթերով: Ան կ'աւելցնէ մարմնին դիմադրողականութիւնը: Կէս մանկօն հաւասար է վաթսունեօթը ջերմուժի:*

### ՆԱՐԻՆՋԸ

*Հատը հաւասար է վաթսուներկու ջերմուժի: Հարուստ է Պէ., Սէ. կենսանիւթերով եւ քալսիումով: Նարինջին մանրաթելերը կ'օգնեն նուազեցնելու արեան քոլեսթերոլին քանակը: Ըստ ուսումնասիրութիւններու, նարինջը կիները կը պաշտպանէ կուրծքի քաղցկեղէ: Կենսանիւթերը կու գան ամբողջացնելու նարինջին մէջ գտնուող* antioxidant*ներու եւ* flavonoid*ներու ազդեցութիւնը, որոնք կ'օգնեն* collagen *տարրին կազմուելուն: Վերջինը անհրաժեշտ է դէմքի գեղեցկութեան համար: Նարինջը երակները առողջ կը պահէ եւ մարմինը կը պաշտպանէ մանրէներէն:*

### ԱՆԱՆԱՍ

*Հարուստ է բնաթելով եւ Սէ. կենսանիւթով, ինչպէս նաեւ՝* folate/thiamine *տարրով, ինչ որ կ'օգնէ մարսողութեան: Գաւաթ մը մանրուած թարմ անանասը հաւասար է եօթանասունվեց ջերմուժի:*

### ՆՈՒՌԸ

*Կէս հատը հաւասար է յիսուներկու ջերմուժի: Հարուստ է բնաթելով: Մարսողութեան դժուարութիւններէն կը պաշտպանէ մարմինը: Հարուստ է նաեւ Սէ. կենսանիւթով եւ փոթասիումով:*

ՔԱՐԼԱ ԵԱՐՏԸՄԵԱՆ

www.hamazkayin.com

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ ԱՆԿԱԽ ՔԻՒՐՏԻՍՏԱՆ ՄԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

## ՊԱՐԶԱՆԻ - ԹԱԼԱՊԱՆԻ ՀԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ

Հիւսիսային Իրաքի քրտական գլխաւոր 2 հատուածները, որոնք Պաղտատի հակակշիռէն դուրս կը ղեկավարեն այդ շրջանը, համաձայնութիւն մը գոյացուցած են սահմանադրութեան նախագիծի մը շուրջ, առ ի պատրաստութիւն այն պարագային, երբ ամերիկեան յարձակում մը պիտի տապալէ Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնը:

Իրաքի մէջ պատերազմի մը հաւանականութիւնը մղած է իրարու մրցակից Քիւրտիստանի Ժողովրդավարական Կուսակցութիւնը եւ Քիւրտիստանի Հայրենասիրական Միութիւնը, իրենց պատմական լարուածութիւնները թաղելու եւ աւելի միացեալ ճակատով ներկայանալու:

Ք. Ժ. Կուսակցութեան Անգարայի ներկայացուցիչ Սաֆին Տիզայի յայտնած է, որ երկու ղեկավարներուն՝ Մասուտ Պարզանիի եւ Ժալալ Թալապանիի միջեւ բանակցութիւններէ ետք կազմուած միացեալ յանձնախումբ մը այս շաբաթ համաձայնութիւն գոյացուցած է, տարեսկիզբին Պարզանիի կողմէ մշակուած սահմանադրութեան մը շարք մը բարեփոխումներուն շուրջ:

Ներկայացուցիչը յայտնած է, որ սահմանադրութեան օրինագիծը կը վերաբերի հիւսիսային շրջանի մէջ շրջանային վարչակարգի մը կառոյցին, ներառեալ՝ օրէնսդիր, արդարադատութեան եւ գործադիր պատասխանատուութիւններ:

Պարզանիի նախագիծը կը նախատեսէ նաեւ դրօշակ մը, նախագահութիւն եւ քարիւղով հարուստ Քերքուքը իբրեւ շրջանային մայրաքաղաք:

Վաւերաթուղթը պիտի քննարկուի Հոկտեմբեր 4ին քրտական միացեալ խորհրդարանին մէկ ժողովին, ինչպէս նաեւ անիկա պիտի ներկայացուի իրաքեան ընդդիմադիր խմբակներու մէկ հաւաքին, որ յառաջիկայ ամիս Եւրոպայի մէջ պիտի կայացուի, ըսած է Տիզայի:

### ՈՒԱՇԻՆԿԹԸՆ Կ՚ԱՌԱՋԱՐԿԷ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԶԻՆԵԱԼՆԵՐ ՄԱՐԶԵԼ

Միւս կողմէ, իրաքեան ընդդիմադիր աղբիւր մը երէկ յայտնած է, որ Մ. Նահանգներ առաջին անգամ ըլլալով առաջարկած են Սատտամ Հիւսէյնի ընդդիմադիր հազարաւոր իրաքցիներ մարզել:

«Ասիկա հիմնական փոփոխութիւն մըն է ամերիկեան քաղաքականութեան մէջ: Մ. Նահանգներ տարիներէ ի վեր մերժած են մեզի ճակատելու համար մարզումներ հայթայթել», ըսած է Լոնտոն գտնուող աղբիւրը:

Ան յայտնած է, որ առաջարկը կատարուած է ժողովի մը ընթացքին, որուն մասնակցած է Իրաքի Ազգային Քոնկրէսը, որ Սատտամի իշխանութեան ընդդիմացող աքսորեալ գլխաւոր խմբակն է:

«Մօտ ատենէն» մարզուելիք խմբակներուն մաս պիտի կազմեն հիւսիսային Իրաքէն քիւրտ ըմբոստներ եւ այլ ուժեր, ըսած է ընդդիմադիր աղբիւրը, առանց յայտնելու, թէ մարզումը ո՞ւր տեղի պիտի ունենայ կամ եթէ Փենթակոնը զէնքեր պիտի հայթայթէ զինեալներուն:

## ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ...

Շարունակուած 5րդ էջէն

*Մեկնաբանելով արժեզրկուած աւանդների վերադարձման գործընթացը, «Արցախպանք»ի Ստեփանակերտի մասնաճիւղի կառավարիչ Ռոպէրթ Գրիգորեանը կարեւորեց Հանրապետութեան Նախագահի հրամանագրի քաղաքական եւ ընկերային նշանակութիւնը, չեշտելով, որ այն հաւատն ու արդարութիւնը վերականգնելու միտում ունի, ու մարդիկ, ընդհանուր առմամբ, գոհունակութեամբ են հեռանում դրամարկղներից՝ ստանալով վաղուց արդէն կորցրած գումարները: Նա միաժամանակ տեղեկացրեց, որ ներկայ փուլում նախնական փոխհատուցում են ստանում 1993ի Յունուարի 1ի դրութեամբ եղած մնացորդները եւ դրանից յետոյ փակուած աւանդային հաշիւները: Իսկ 1000 ռուբլին գերազանցող գումարը ենթակայ չէ փոխհատուցման: Ըստ վճարման կարգի, որոշակի սահմանափակում է մտցուած նաեւ մահացած քաղաքացիների աւանդների վերադարձման գործընթացում: Ժառանգութեան իրաւունքով մահացածների անուամբ խնայողութիւնները կարող են ստանալ միայն կենսաթոշակային տարիքի ժառանգները՝ ներկայացնելով նոտարի կողմից հաստատուած համապատասխան վկայական:*

## ԵՕԹԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻՆ ՓԱՔԻՍՏԱՆԻ ՄԷՋ

*Փաքիստանի Քարաչի քաղաքին մէջ երկու զինեալներ խուժած են քրիստոնէական բարեկամական կազմակերպութեան մը գրասենեակներէն ներս, իրենց աթոռներուն կապած են 7 քրիստոնեաներ, ապա զանոնք սպաննած են:*

*Յարձակումը նորագոյնն է քրիստոնեայ կամ արեւմտեան թիրախներու վրայ շարք մը արիւնալի հարուածներու, երկրին զինուորական կառավարութեան՝ ամերիկեան գլխաւորութեամբ ահաբեկչութեան դէմ պատերազմին ի նպաստ կողմնորոշուելու որոշումէն ի վեր (անցեալ տարի):*

*Ոստիկանութիւնը յայտնած է, որ 7 զոհերը՝ բոլորը փաքիստանցի, իրենց գլուխէն ատրճանակի հարուածներ ստացած են: Երկու ուրիշներ ծանրօրէն վիրաւորուած են:*

*Զինեալները խոյս տուած են եւ հետապնդումներու առարկայ դարձած:*

*Խաղաղութեան եւ Արդարութեան Կազմակերպութեան գրասենեակներուն վրայ տեղի ունեցած յարձակումը կը պատահէր արեւմտեան Հնդկաստանի Կուճարաթ նահանգին հինտու մէկ տաճարին վրայ երկու զինեալներու կողմէ յարձակումէ մը օր մը ետք: Անիկա երկու զոհ խլած է:*

*Հնդկաստանի փոխ վարչապետ Լալ Քրիշնա Ատվանի քողարկուած ձեւով Փաքիստանը ամբաստանած է այդ յարձակումին համար:*

*Մեկնաբաններ թերահաւատ են, թէ Հնդկաստան կրնայ մեղսակից ըլլալ նորագոյն յարձակումին:*

*Փաքիստան ծայրայեղական խմբակներու աւելի քան երկու տասնեակ անդամներ ձերբակալած է՝ յարձակումներուն կապակցութեամբ, սակայն անցեալ շաբաթավերջին ներքին գործոց նախարար Մոյնուտտին Հայտըր յայտնած է, թէ կը կասկածի, որ Հնդկաստանի գաղտնի սպասարկութիւնները զինեալները ֆինանսաւորած ըլլան:*

### ՏԱՃԱՐԻՆ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄ

*Միւս կողմէ, հնդկական ուժերը երէկ յարձակած են Կուճարաթի հինտու տաճարին վրայ եւ սպաննած երկու իսլամ զինեալներ, որոնք 28 հոգի ջարդած էին օր մը առաջ:*

*Հնդկաստան Փաքիստանը այպանած է յարձակումին համար, որ, ըստ Նիւ Տելհիի, գործադրուած է զինեալներու կողմէ, որոնք յայտնապէս կ'ուզեն վրէժը լուծել այս տարեսկիզբին Կուճարաթի մէջ համայնքային բնոյթի խռովութիւններու ընթացքին սպաննուած իսլամներու:*

*Աւելի քան 70 հոգի վիրաւորուած է 28 զոհերուն կողքին:*

(ՌՈՅԹԸՐԶ)

LEBANESE ARMENIAN TECHNICAL COLLEGE
L.A.T.C.
ԱԶԳԱՅԻՆ ԳՈԼԷՃ

Technical Baccalaureate BT

Commercial Sciences
Accounting and Computer Services
Sales and Commercial Relationships
Administrative and Office Services

Professional & Technological Studies PTS

COMPUTER

Literacy
Windows, Internet, Utilities
Microsoft Office:
(Word, Excel, Access, PowerPoint, Outlook)

Graphics
Adobe Photoshop
Quark Express
Coral Draw

Web Design
HTML (Front page, Programming)
Macromedia Flash
JAVA script

Business & Accounting
Salesmanship
Management
Accounting
Finance
Economy

LANGUAGES
English (level I, II, III)
Spoken French
Spoken Arabic
Spoken Armenian

FASHION-DRESS DESIGN

INSURANCE

Office hours: Monday - Friday 3:00 P.M. to 9:00 P. M.

Levon & Sophia Hagopian College,
Bourj Hammoud, Arax Street
Tel: 01 / 262618

www.LATC-edu.com
Email: info@LATC-edu.com

## ՄՈՒՊԱՐԱՔ ՍԷՈՒՏՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՀԵՏ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՏԱԳՆԱՊԸ

ՌԻԱՏ,25 ( ՌՈՅԹԸՐԶ).- Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաք Չորեքշաբթի օր (երէկ) Սէուտական Արաբիա ժամանեց, տեսակցութիւններ ունենալու համար գահաժառանգ Ապտալլա իշխանին հետ:

Սէուտական լրատու աղբիւրներ հաղորդեցին, որ Ապտալլա, պաշտպանութեան նախարար Սուլթան իշխան եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներ դիմաւորեցին Մուպարաքը: Յիշեալ աղբիւրները աւելցուցին, որ Մուպարաքի այցելութեան նպատակն է քննարկել Իրաքի դէմ յարձակում մը կանխարգիլելու կարելիութիւնները, ինչպէս նաեւ պաղեստինեւիսրայէլեան օրըստօրէ թափ ստացող տագնապը:

Եգիպտացի պաշտօնատար մը յայտնեց, որ Մուպարաք Ապտալլա իշխանին վեկուցեց Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնէն ստացած նամակի մը բովանդակութեան մասին: Նամակը Մուպարաքի յանձնած էր Իրաքի արտաքին գործոց նախարար Նաժի Սապրի: Ան աւելցուց, որ Մուպարաք եւ Ապտալլա քննարկեցին պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի շրջափակումն ու Իսրայէլի որդեգրած անընդունելի միջոցառումները:

## ԻՐԱՆ Կ՚ԱՐՏԱԴՐԷ «ՖԱԹԷՀ ԷՅ – 110» ՀՐԹԻՌՆԵՐ

ԹԵՀՐԱՆ, 25 (ՌՈՅԹԸՐԶ).- Իրան, որ Միացեալ Նահանգներուն կողմէ կ՚ամբաստանուի հաւաքական քանդումի զէնքեր արտադրելու յանցանքով, սկսած է մեծաքանակ արտադրութեան նոր հրթիռի մը, հաղորդեցին օրաթերթերը Չորեքշաբթի օր:

«*Միասաք Է Ռուզ*» օրաթերթը՝ մէջբերելով պաշտպանութեան նախարար Ալի Շամխանին, հաղորդեց, որ Իրան պաշտպանութեան զէնքեր կ՚արտադրէ առաւելագոյն ապահովութիւնը հաստատելու համար իսլամական հանրապետութեան սահմաններուն: Օրաթերթը աւելցուց, որ Շամխանի յայտնած է, թէ Իրան պիտի ձեռնարկէ մեծաքանակ արտադրութեան «*Ֆաթէհ Էյ - 110*» հրթիռին, ինչպէս նաեւ հակօդային ու հականաւային երկու այլ հրթիռներու:

Քանի մը շաբաթ առաջ, Իրան յաջողութեամբ փորձարկած էր «*Ֆաթէհ Էյ - 110*» հրթիռը: Շամխանի ըսաւ նաեւ, որ Իրան չի մտադրեր աւելցնել հրթիռներուն հասողութեան ուժը: Ան շեշտեց, որ Իրանի հրթիռային ծրագիրները կ՚ընթանան միջազգային սկզբունքներուն եւ համաձայնագիրներուն հետ:

### ՈՒՔՐԱՆԻԱ

## ՔՈՒՉՄԱ - ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔԻԵՒ, 25 (ՌՈՅԹԸՐԶ).- Ուքրանիոյ նախագահ Լէոնիտ Քուչմա Չորեքշաբթի օր տեղի տուած է ընդդիմադրութեան ճնշումներուն առջեւ՝ տեսակցութիւն մը ունենալով ղեկավարներուն հետ, որոնք գիշերը հացադուլի դիմած են՝ անոր գրասենեակներուն միջանցքներուն մէջ, սակայն ան առանց այլեւայլի մերժած է հրաժարելու անոնց պահանջները:

Քուչմա, որ բողոքի ճնշումներուն ենթակայ է, Երեքշաբթի օր մերժած է երեսփոխաններուն հետ տեսակցութիւն ունենալ՝ յայտնելով, որ անոնց վերջնագիրներուն առջեւ տեղի պիտի չտայ:

Սակայն ընդդիմադիր ղեկավարներ, որոնք այս ամիս աւելի քան տասնամեակի մը հակա-Քուչմա մեծագոյն ցոյցերը գլխաւորած են, ըսած են, որ կարեւոր յաղթանակ մը ապահոված են՝ անոր ստիպելով, որ իրենց հետ տեսակցութիւն ունենայ: Ընդդիմադիր Ընկերվարական Կուսակցութեան ղեկավար Օլեքսանտր Մորոզ յայտնած է, որ երեսփոխաններու խմբակը պիտի դադրեցնէ հացադուլը, սակայն «մեր բողոքի արարքները պիտի շարունակուին»:

Քուչմա կ'ամբաստանուի փտածութեամբ եւ թղթակից Կէորկի Կոնկածէի սպանութեան մեղսակցութեամբ:

Ան նաեւ Արեւմուտքին կողմէ քննադատութեանց ենթակայ է, ամերիկեան այն ամբաստանութենէն ետք, թէ ան Իրաքի օժանդակած է՝ զէնքեր հաւաքելու համար:

Հովանաւորութեամբ՝
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏԻ

Ներկայութեամբ՝
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ

Ձեզ կը հրաւիրէ
ԱՂԲԱԼԵԱՆ - Հ.Մ.Ը.Մ. ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ
ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 28 Սեպտեմբեր 2002ին, երեկոյեան ժամը 6:00ին, Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ. Մարզամշակութային Համալիրին մէջ, Անթիլիաս, Մըզհեր: